ԲՅՈՒՐԵՂԱՑՈՒՄ-ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՈՒՐՎԱԳՐԵՐ

Ութերորդ հաղորդում

Քաղաքի պարսպի կառուցումը եկեղեցու՝
որպես Աստծու տան պաշտպանության համար

Գրվածքների ընթերցում. Նեմ 1:3, 2:9-20

I. Եզրասի գիրքը Իսրայելի գերության վերադառնալու և տաճարի վերակառուցման պատմությունն է. Նեեմիայի գիրքը Երուսաղեմ քաղաքի պարսպի վերակառուցման պատմությունն է՝ Նեմ 2:17-20.

Ա. Երուսաղեմ քաղաքը քաղաքի ներսում եղող Աստծու տան ապահովությունն ու պաշտպանություն էր՝ խ. 13.

1. Դա նշանակում է, որ Աստծու տան՝ որպես երկրի վրա Նրա բնակատեղի ու կացարանի գոյության համար անհրաժեշտ է, որ հաստատվի Նրա թագավորությունը՝ որպես ոլորտ, որը կպահպանի Նրա շահերը երկրի վրա Նրա կառավարման համար, որպեսզի իրագործվի Նրա տնտեսությունը՝ խ. 15:
2. Աստծու տան վերակառուցումը դեգրադացված եկեղեցու՝ Աստծու կողմից վերականգնման նախատիպն է, իսկ Երուսաղեմ քաղաքի պարսպի վերակառուցումը Աստծու կողմից Իր թագավորության վերականգնման նախատիպն է՝ խխ. 17-20:

Բ. Աստծու տան և թագավորության կառուցումը սերտորեն կապված են՝ Մտթ 16:18-19:

II. Նեեմիայի գրքի առաջին բաժինը՝ 1–7-րդ գլուխները Նեեմիայի ղեկավարման ներքո Երուսաղեմ քաղաքի պարիսպը վերակառուցելու մասին է.

Ա. Նեեմիան լուր ստացավ, որ Երուսաղեմի պարիսպը քանդված է, իսկ դարպասները՝ հրկիզված՝ 1:3բ:

Բ. Նեմ 2:9-16-ը պատմում է այն մասին, որ Նեեմիան Երուսաղեմ ուղևորվեց և անձամբ զննեց Երուսաղեմ քաղաքի պարսպի վիճակը:

Գ. Նեմ 2:17-20-ը Երուսաղեմի պարսպի վերակառուցման վերաբերյալ խոսք է.

1. Տաճարը Տիրոջ ներկայության վայրն է, որտեղ հանդիպում ենք Տիրոջն ու ծառայում Նրան, բայց տաճարին պաշտպանություն է հարկավոր:
2. Քաղաքի պարիսպը տաճարի պաշտպանությունն է. առանց քաղաքի պարսպի՝ պաշտպանություն չկա:
3. Քաղաքի պարիսպը ոչ միայն պաշտպանության, այլև առանձնացման համար է:
4. Նեեմիայի գրքում ասվում է, որ մենք բոլորս պետք է պարսպի մեր բաժինը կառուցենք. ամեն ոք պետք է իր սեփական բաժինը կառուցի՝ 4:6, 19:

Դ. Մենք պետք է խորքային կերպով հետևենք Նեեմիայի նմուշին, որպեսզի «կառուցենք պարիսպը»՝ կառուցենք եկեղեցին՝ որպես Աստծու

թագավորությունը եկեղեցու՝ որպես Աստծու տան, Նրա բնակատեղի պաշտպանության համար՝ 2:4, 10, 17-20, Եփս 2:21-22:

III. Պարսպի կառուցման նպատակը մեզ բոլորիս Քրիստոսի գլխավորության ներքո կյանքում պատշաճ կարգուկանոնի բերելն է՝ 1:22-23, Կոլ 1:18, 2:19.

Ա. Քրիստոսը թե՛ ընդհանրականորեն Մարմնի՝ եկեղեցու Գլուխն է, թե՛ անհատապես բոլոր հավատացյալների Գլուխը. Նա անմիջականորեն մեզնից յուրաքանչյուրի Գլուխն է՝ 1:18, Ա Կրթ 11:3:

Բ. Եկեղեցական կյանքը Քրիստոսի եզակի գլխավորության ներքո գլխավորվելու կյանք է՝ Եփս 1:10, 22-23, 4:15-16, Կոլս 2:19:

Գ. Եթե պատվենք Քրիստոսի եզակի գլխավորությունը, ապա Տիրոջ վերականգնման մեջ եկեղեցին ոչ միայն տուն, այլև քաղաք կլինի՝ Եբր 11:10, Եզր 1:2-3, Նեմ 1:9, 2:5, 17, Ա Տմթ 3:15, Հյտ 21:2, 10-11:

1. Եկեղեցին՝ որպես տուն, գլխավորապես Քրիստոսի՝ որպես կյանքի հետ է կապված, իսկ եկեղեցին՝ որպես քաղաք, գլխավորապես Քրիստոսի՝ որպես Գլխի հետ է կապված՝ Ա Տմթ 3:15, Մտթ 5:14, Կոլս 3:4, 1:18.

   ա. Երբ փորձառաբար ապրում ու վայելում ենք Քրիստոսին՝ որպես կյանքի, մենք ունենք եկեղեցին՝ որպես տուն. երբ իրականացնենք Քրիստոսի եզակի գլխավորությունը, եկեղեցին կընդլայնվի որպես քաղաք, որը խորհրդապատկերում է Աստծու թագավորությունը՝ Մտթ 16:18-19:

   բ. Եկեղեցին՝ որպես քաղաք, ոչ միայն Քրիստոսից՝ որպես կյանքից, այլև Քրիստոսի գլխավորությունից է կառուցվում, ուստի Քրիստոսը պետք է ոչ միայն մեր կյանքը լինի, այլև մեր Գլուխը՝ Կոլս 3:4, 1:18, 2:19:

2. Եթե պատվենք Քրիստոսի եզակի գլխավորությունը, եկեղեցին տնից կընդլայնվի քաղաքի՝ նախատեսված Թագավորի և Նրա թագավորության համար՝ Սղմ 48:1-2, Ա Կրթ 1:2, 12:12-13, 27, Եփս 1:22-23, 4:15-16, Հյտ 21:2, 10-11, 14, 11:15:

IV. Մենք պետք է կառուցենք պարիսպը, որպեսզի եկեղեցին պաշտպանենք տարբերվող ուսմունքներից, որոնք հակառակ են առաքյալների ուսմունքին՝ Գործ 2:42, Ա Տմթ 1:3-4.

Ա. Այլ ուսմունքները վերաբերում են այն ուսմունքներին, որոնք չեն համապատասխանում Աստծու տնտեսությանը՝ 6:3:

Բ. 1:3-4, 6-7, 6:3-5, 20-21-ում հիշատակված այլ ուսմունքներն ու 4:1-3-ում հիշատակված հերձվածողությունները եկեղեցու անկման, դեգրադացիայի և վատթարացման սերմն են, դրա աղբյուրը:

Գ. Այլ բաներ ուսուցանելը քանդում է Աստծու կառույցը և ի չիք է դարձնում Աստծու տնտեսությունը. նույնիսկ մի փոքր այլ բան ուսուցանելը ավերում է վերականգնումը:

Դ. Տեղական եկեղեցու ղեկավարման ու հովվության համար առաջին բա -

նը, որ անհրաժեշտ է, տարակարծիք անձանց այլ ուսմունքներին վերջ դնելն է, որոնք սրբերին շեղում են Աստծու նորկտակարանյան տնտեսության կենտրոնական գծից՝ Տտս 1:9:

Ե. Մենք պետք է խուսափենք այլ ուսմունքներից և կենտրոնանանք Քրիստոսի և եկեղեցու վերաբերյալ Աստծու տնտեսության վրա՝ Ա Տմթ 1:3-4, Եփս 3:9, 5:32:

V. Եթե եկեղեցում կառուցվի պարիսպը, մենք պաշտպանված կլինենք նրանցից, ովքեր թշնամու կողմից օգտագործվում են Աստծու կառուցման աշխատանքն ավերելու համար.

Ա. Աստվածային կառուցումն ավերողները հերձվածողություններ քարոզողներն ու սովորեցնողներն են՝ Բ Պտ 2:1, Բ Հվի 7-11.

1. Նրանք, ովքեր հերձվածողություններ են ուսուցանում Քրիստոսի անձի վերաբերյալ, հակաքրիստոսներ են, որոնք ուրանում են թե՛ Տիրոջ՝ որպես Տիարի անձը, թե՛ Նրա փրկագնումը, որով Տերը գնեց հավատացյալներին. մեծ հերձվածողություն է ուրանալը, որ Հիսուս մարդն Աստված է՝ խ. 7, Ա Հվի 2:18, 22-23, 4:2-3:
2. Առաքյալը հավատացյալներին զգուշացնում էր, որ հետևեին իրենց, այլապես կենթարկվեին հերձվածողությունների ազդեցությանը և կկորցնեին ճշմարտության բաները. մենք պետք է մերժենք նրանց, ովքեր մերժում են Քրիստոսի սաղմնավորումն ու աստվածությունը՝ նրանց չընդունելով մեր տներ ու չողջունելով նրանց՝ Բ Հվի 8-11:

Բ. Աստվածային կառույցն ավերողները պառակտիչ, աղանդավոր մարդիկ են՝ Տտս 3:10.

1. Պառակտիչը հերձվածող, աղանդավոր մարդն է, որը, եկեղեցում իր կարծիքների համաձայն խմբավորումներ ձևավորելով, բաժանություններ է առաջացնում. եկեղեցում լավ կարգուկանոն պահպանելու համար պետք է հեռու մնալ պառակտիչ, բաժանություն առաջացնող մարդուց, նրան մերժել առաջին ու երկրորդ անգամ խրատելուց հետո՝ խ. 10:
2. Քանի որ բաժանարարությունը վարակիչ է, այս մերժումն ի շահ եկեղեցու է, որպեսզի դադարեցվի բաժանարար մարդու հետ հարաբերվելը՝ հմմտ Թվց 6:6-7:

Գ. Աստվածային կառույցն ավերողները բաժանություններ առաջացնողներն են՝ Հռմ 16:17.

1. Հռմ 14-րդ գլխում Պողոսը լայնություն ու երկայնամտություն էր ցուցաբերում այն մարդկանց ընդունելու հանդեպ, ովքեր տարբերվում են իրենց վարդապետությամբ ու կիրարկումներով, սակայն Հռմ 16:17-ում անզիջում և վճռական կերպով ասում է՝ «նկատի առնել նրանց, ովքեր բաժանություններ ու խոչընդոտներ են առաջացնում՝ հակառակ այն ուսմունքին, որը դուք սովորեցիք, և նրանցից երե՛ս դարձրեք»:

2. Տերն ատում է «եղբայրների միջավայրում տարաձայնություններ բերողին»՝ Առկ 6:16, 19:

Դ. Աստվածային կառույցն ավերողները նրանք են, որ փառասիրական ձգտում ունեն դիրքի հանդեպ՝ Գ Հվի 9.

1. Մենք երբեք չպետք է Տիրոջ համար որևէ գործում առաջինը լինելու հնարավորության հետևից ընկնենք. առաջինը լինելու համար ուրիշների հետ մրցելը ծածուկ փառասիրության նենգ աշխատանքն է՝ խ. 9:
2. Աստվածային կառույցն ավերողները նրանք են, ովքեր հոտը չխնայող գայլեր են, և նրանք, ովքեր խեղաթյուրված բաներ են ասում, որպեսզի հավատացյալներին իրենց հետևից քաշեն՝ Գործ 20:29-30:

VI. Պարսպի կառուցումից հետո մենք կկարողանան դիմակայել մահվան հարձակմանը եկեղեցու վրա և կառուցել Քրիստոսի Մարմինը Քրիստոսի հարության կյանքում՝ Մտթ 16:18, Հվի 11:25, Եփս 1:22-23, 4:16.

Ա. Մահը Սատանայի աշխատանքի բնորոշ գիծն է. նրա աշխատանքի վերջնական նպատակը մարդուն մահով հագեցնելն է՝ Եբր 2:15:

Բ. Մտթ 16:18-ը ցույց է տալիս, թե ինչ աղբյուրից են եկեղեցու վրա հարձակումները գալու, այն է՝ «դժոխքի դարպասներից», այսինքն՝ մահից.

1. Սատանայի հատուկ խնդիրը եկեղեցու ներսում մահ տարածելն է, և եկեղեցու առնչությամբ նրա մեծագույն վախը եկեղեցու դիմադրելն է մահվան իր զորությանը՝ Հյտ 2:8, 10-11:
2. Եկեղեցին, որը կառուցվում է «այս վեմի» վրա, կարող է զանազանել կյանքն ու մահը, և դժոխքի դարպասները չեն հաղթահարի եկեղեցուն՝ Մտթ 16:18:

Գ. Մենք պետք է ճանաչենք Քրիստոսին՝ որպես Առաջինի ու Վերջինի՝ Մշտագոյի և Անփոփոխի, և որպես Նրա, ով մեռած դարձավ և դարձյալ կենդանի է, հարության մեջ Եղողի՝ Հյտ 1:17-18, 2:8, Հվի 11:25, Գործ 2:24:

Դ. Մենք կարող ենք Քրիստոսի Մարմինը կառուցել միայն Քրիստոս հարության կյանքում՝ Եփս 2:6, 21-22, 4:16, Հյտ 1:18, 2:8, Փլպ 3:10.

1. Քրիստոսի Մարմինը Քրիստոսի հարության կյանքի մեջ է՝ Հվի 11:25.
   ա. Եկեղեցու՝ որպես Քրիստոսի Մարմնի բնությունը հարություն է՝ Գործ 2:24, Եփս 1:19-23:
   բ. Եկեղեցին նոր ստեղծագործությունն է՝ Քրիստոսի հարության մեջ և հարուցանված Քրիստոսի կողմից ստեղծված՝ Ա Պտ 1:3, Եփս 2:6, Գղտ 6:15:
2. Քրիստոսի Մարմինը հարության մեջ է, իսկ հարության իրականությունը Քրիստոսն է՝ որպես կենդանարար Հոգին՝ Հվի 11:25, 20:22, Ա Կրթ 15:45բ:
3. Հարության սկզբունքն այն է, որ բնական կյանքը սպանվում է, իսկ աստվածային կյանքը ելնում է՝ դրա տեղը զբաղեցնելու՝ Բ Կրթ 1:9:

4. Երբ մենք չենք ապրում բնական կյանքով, այլ ապրում ենք մեր ներսում եղող աստվածային կյանքով, լինում ենք հարության մեջ. նման ապրելակերպի արդյունքը եկեղեցու՝ որպես Քրիստոսի մարմնի աճն ու կառույցն է՝ Փլպ 3:10-11, Եփս 4:15-16, Կոլս 2:19, 3:15:

© 2022 Living Stream Ministry